սեղանների առաջ ու վերցրեց հովհարները:

Փայտիկների բաղխումին յաջորդեց մի ուրիշ ձայն, որ առաջանում էր մի կաշէ բարձի վրա տեղացող գարկերից: Ու հնչեց նոյն մեղեդին, որ մի քիչ առաջ լսել էի թղթէ պատի ետեւից, «ամնա՛, ամնա՛, այդա՛, այդա՛»:

Ամբողջ խումբը դարձեալ ոտքի ելաւ ու վերջին անգամ ձեռքերը պարզելով դէպի Ամիդան, երկար շարքով շարժւեց դէպի դուռը:

Ճիշտ մուտքի առաջը դրւած էր մի վիշապի կերպարանք: Առաջին վանականները անցան նրա վրայով. իսկ յաջորդները կողքից:

Երկար ժապաւէնի նման ձգւում էր այդ շարքը միջանցքի երկարութեամբ, ձեռքերը միշտ աղօթատարած իրար կցած ու սաղմոսը շրթունքին. «ամնա՛, ամնա՛, այդա՛, այդա՛»:

Մի ակնթարթ միայն կանգ առան. երգը աւելի ուժեղ հնչեց, բայց իսկոյն սկսեց հետզհետէ թուլանալ, մեղմանալ ու հանգչել նրանց հեռացող քայլերի հետ:

Ժողոյի աղանդը բուդդհիստ բազմաթիւ աղանդներից մէկն է: Բուդդհայի կրօնը Ճապոն է մտել վեցերորդ դարում եւ մեծ ազդեցութիւն է ունեցել երկրի կուլտուրական կեանքի վրա: Բուդդհիստներ են եղած երիտասարդութեան դաստիարակը. նրանք էին, որ բժշկութիւն բերին Ճապոն, նպաստեցին արւեստների զարգացմանը եւ ընդհանրապէս մեծ դեր խաղացին ժողովրդի մտաւոր եւ հասարակական կեանքում:

Նոյն իսկ միկադօներ են եղած, որոնք՝ հրաժարւելով